




“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ”. ԳՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԺԵ.

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ. ՅՈՒՆԻՍ 1, 1886

ԹԻՒ 6



**ՄԵՆԱՑ ԿԱՄՈՒՐՁ**

Հիւսիսային արեւմտեան անկիւնն Ուէյլի որ է մի մասն Մեծին Բրիտանիոյ, կը գտնուի Էնկլըսի կղզին որ բաժնուած է Ուէյլէ Մենայ նեղցով: Նեղցին լայնքը կը զանազանի տեղ տեղ 200 եարտայէ մինչև 2 մըն կամ 3,220 եարտա, և թէպէտ նեղցին նաւարկութիւնն է դժուարին և երբեմն վտանգաւոր, շատ անգամ կ'անցնին անկէ փոքր նաւեր վասն զի կը կարճեցունէ Լիվըրփուլի ճամբան:

Այս նեղցին վրայ շինուած են երկու կամուրջներ, որոց երկուքին կը համարուին աշխարհիս ընտրեալոցն կամուրջներուն կարգէն: Առաջինը որ

**ՄԵՆԱՑ ԿԱՄՈՒՐՁ**

պատկերին մէջ կ'երևի աւելի հեռին, շինուեցաւ 1826 ին կառուց և հետիոտս անցորդաց համար: Մօտ եղողն է երկաթուղոյ կամուրջ որ շինուած է 1830 ին, որոյ յատակագիծը հանց հռչակաւոր երկրաչափը Բոպէրթ Սթիվընսըն, որոյ հայրը, ճորճ Սթիվընսըն, հնարիչն է շոգեկառուց: Այս կամուրջ է ծեծուած երկաթ խողովակէ շինուած 1,511 ոտք երկայնութեամբ, և 100 ոտք բարձր կը մնայ ջրէն բարձրագոյն մակընթացութեան ժամանակ: Շինուեցաւ այսչափ բարձր, որպէս զի բարձրագոյն կայմեր ունեցող նաւերու կարելի ըլլայ անցնել

անոր ներքեւն: Անոր շինութիւնն և զաւ աւելի դժուարին, վասն զի անոնք որ կ'ընդգլխմանային կամուրջին շինութեան, յաջողեցան արգելել տալ Խորհրդարանին գործածել կամարներ և այսպէս կը կարծէին թէ անհնարից կարգը դասեցին կամուրջին շինութիւնը: Աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել թէ կամուրջին վրայ երկայնութեամբ կան երկու խողովակներ իրարու քով որոց իւրաքանչիւրն ունի երկաթուղոյ գիծ, այնպէս որ կառախումբը կրնան ընթանալ երկու ուղղութեամբ ևս:

Էնկլըսի կղզին որուն վրայ է այս կամուրջին մի ծայրը, հռչակաւոր էր իբրև տեղի ուր կը նստէին Դրուիդք

որ էին Անգղիոյ հեթանոս քահանայք կամ քուրմք : Այս քուրմք ունէին ինչպէս կրօնական նոյնպէս և քաղաքական իշխանութիւն և շատ մարդազոհներ կր մատուցանէին : Երբ Փրկկիչն մեր կը գտնուէր երկրիս վրայ, Անգղիա էր այս Դրութեաց իշխանութեան ներքև, բայց Գրիստոսն քիչ ետքը անսոք ինկան իշխանութենէ Հռոմայեցուոց ձեռամբ որք նուաճեցին զԳրիստանիս :


ԻՄ ՏՂԱՍ

(ՏԵՒՄԱԿԱՆ ԻՆՎԵՏԻԳԱՆԻՅԵՐ)

Քանի մը տարի առաջ մեր հիւսիսային ծովեզրին մօտ եղող զեղեցիկ

այդ : Յետոյ պատմեց ինձ պատմութիւնը : Նա մը փոթորիկի ատեն ժայռերու զարնուած և անյուսարար կորսուած էր : Հին պատմութիւն մ'էր այս — պատմութիւն մահու և ոչ կենաց : Միւս նաւը ճամբայ ելած էր բան մը ընելու կայր փափաքով : Սա խորտակեալ նաւէն բաւական հեռի տեղ մը կայնեցաւ և կը դիտէր : Այս էր անոր բոլոր բրածը . և շատ բան մը չէր այդ : Սակայն մարդիկ չէին համարձակէր աւելի յառաջ երթալու : Քանզի զայս ընելով կրենց կեանքը պիտի կորսնցունէին . և զայդ ընելու համար ալ բաւական մեծանձնութիւն չունէին : Տղաս բաւ . «Տէր Նաւապետ,

պատմութիւնը ինչպէս որ լսեցի այդ միայնակ և ալւոր ձկնորսէն այն կերակի կէս օրին : Իւր տղուն դիւցազնութեան պատմութիւնը մասնաւոր նուիրականութիւն մը ստացած էր տղուն մահուամբ, որ քիչ ժամանակ ետքը տեղի ունեցած էր, երբ նա կորսուեցաւ ծովուն մէջ և ոչ ոք գտնուեցաւ զնա ազատելու համար : Բայց հիմա կը հարցնեմ քեզ, եթէ դու այն նոյն մարդոց մին ըլլայիր, և եթէ ներքին Միչէլ ս'է բան մը ըսէր քեզ, պիտի չհաւատայի՞ր անոր : Եթէ նա քեզ ընէր խոստում մը, պիտի չվճարէ՞ր անոր : Եթէ նա խնդրէր քու խորհուրդդ, քու սէրդ, քու ծա-



Genning

ՊԱՐՏ Ի ԼԱՆՈՐ

կղզի մը գտնուեցայ . և կիրակի կէս օր մը, երբ կը վերադառնայի փոքրիկ եկեղեցիէն ուր Բարի Հովուին անուամբ խօսած էի քանի մը ցրտեալ ոչխարաց, քիչ մը հանգչելու համար ձկնորսի մը խրճիթը մտայ : Պարզ սենեակ մ'էր այն ուր կը նստէի . բայց պատին վրայ կախուած էր պզտիկ պատկեր մը, որ շատ սիրելի էր ձեր մարդուն և իւր կնոջ : Պատկերին մէջ կային երկու նաւեր, որոց մին ժայռերուն զարնուած էր : Երկու նաւերու մէջտեղ կար փոքրիկ նաւակ մը, որոց մէջ նստած էին երկու երիտասարդներ : Երբ սաստիկ այէկոծեալ էր, բայց նաւակը յուսահատական ջանքեր կ'ընէր դէպ ի խորտակեալ նաւը երթալու : Երբ ձկնորսը նաւակը մատնանիչ ընելով ըսաւ, «Իմ տղաս է

ես պիտի երթամ ջանալ ազատել այդ մարդիկը :» Եւ նաւապետն ըսաւ, «Ներքին, եթէ երթաս, պիտի ընկղմիս :» Եւ տղաս ըսաւ, «Տէր Նաւապետ, ես ընկղմելուս վրայ չեմ խորհիր, այլ կը խորհիմ թէ ինչպէս կրնամ ազատել այդ մարդիկը :» Ուստի նա և նաւուն մէջ գտնուող անոր ընկերը նաւակը վար աւախ և թխալարեցին դէպ ի խորտակեալ նաւը : Անոնք ազատեցին ամէն մարդ որ հան էր : Եւ իմ տղաս ըսաւ, «Ինձ այնպէս կը թուէր թէ ծովը աւելի խաղաղ էր ուր որ մեր նաւակը կ'երթար քան մեր շուրջը :» Եւ ես ըսի, «Ներքին, Աստուծոյ էր այն :» «Կարծեմ այնպէս էր, հայր» ըսաւ նա : Երանի թէ կարենայի պատմել ձեզ

ուսայութիւնդ պիտի չընդունէ՞ր զանոնք : Եթէ նա լուր մը բերէր քու հօրմէդ, մտիկ պիտի չընէիր անոր : Եթէ դու հօրմէդ հեռացած ըլլայիր, և նա մահուան մէջէն անցնելով գար և իմացունէր քեզ թէ քու հայրդ կը սպասէ քեզ, և անձկանօք կը բաղձայ որ դու դառնաս տուն, պիտի չերթայի՞ր : Եւ, ո՛հ, եթէ ներքին Միչէլ խոստանար տուն ասնել զքեզ այն նաւակով որ ազատած էր զքեզ, ո՞րք երբէք անշուշտ : Սրբ՝ Աստուծոյ Որդին եկաւ քեզի համար : Նա վնասուեց զմեզ և մեռաւ մեզ համար : Գաւազմեզ : Մենք պարտինք հաւատար անոր և վստահել անոր սիրոյն, և սիրել զնա մինչ նա բերկրութեամբ կը տանի զմեզ ի տուն :

Լ Ա Ն Ո Ր

Լահոր է մայրաքաղաք Բենճապ տնուն գաւառին որ կ'իյնայ Հնդկաստանի հիւսիսային կողմը, և չէնքը որ կը տեսնուի պատկերին մէջ, և այդ գաւառին Անգղիացի կառավարչին պարտաւր : Լահոր է ինգոս գետոյն ճիւղերէն միոյն վրայ, և ունի իբր 100,000 բնակիչ : Բայց ուշադրութիւն դըրաւող գլխաւոր հանգամանքն է անոր անցեալ պատմութիւնը որ մասնաւորապէս կապակցութիւն ունի Մողայ մեծ պետութեան հետ : Յամին 1326 Մուլթան Պապէր, որ ձինկիլ խանի և Լէնկիթիմուրի սերունդէն էր, հիմնեց այս պետութիւնը, և անոր սերունդէն եղող յաջորդաց Էբպէրի, ձիհանկիրի, և ձիհանի օրով հասաւ իւր մեծ գօրութեան և փառաց զագաթնակէտը : Գեղեցիկ պարա-

բայց ունինք յոյս թէ այս է ժամանակաւոր վիճակ միայն : Միլիոնաւոր Հընդիկը թերեւս ոչինչ կը թուին զարդիս յաշա քաղաքակիրթ աշխարհի, բայց անոնք սկսած են լուսաւորուիլ Անգղիոյ կառավարութեան ազդեցութեան ներքեւ, և կը հաւատանք թէ, ապագային մէջ երբ թօթափեն իրենց վըրայէն կառապաշտութիւնը, երբ մտան զաստիարակութիւնը և ճշմարիտ կրօնը տիրէ, պիտի ունենան այնպիսի մեծութիւն որ գերազանց ըլլայ քան որչափ զիտեն իրենց անցեւորն վրայ :

ՈՒՒՂԻԻ ԲԵՆՆԻՆ


Ուիլիի քոյրը միսիոնարի կին մ'էր Աւերիկէի մէջ, և այս ընտանիքը սրնտուկ մը կը լեցունէր անոր զրկելու համար իբրև նուէր : Մինչ ամէն մէկը կը զեատեղէր իւր ընծան ստուկին մէջ, փոքրիկն Ուիլի ըսաւ, «Կ'ուզեմ տալ

նաև դրուած էր սա իրողութիւնը թէ, Աւերիկայի մէջ աղօթք մատուցուած էր անոր օգտակարութեանը մասին յաջողութեանը համար : Այս տեսրակ տրուեցաւ բնիկ ուսուցչին : Նա կարգաց զայն իւր ճամբորդութեան ժամանակ : Տեսրակը բացաւ անոր աչքը, ցուցուց անոր թէ կորսուած մեղաւոր մ'էր յախտեանական մահուան վտանգին մէջ, և թէ անոր բոլոր զիտութիւնը չէր կրնար ազատել դնա : Նաև իմացուց անոր թէ կայ էակ մը, որ կարող և յօժար է փրկելու, որ մեռաւ անոր համար և կը սպասէ փոխարինութիւն մը իւր մեծ սիրոյն :

Այսպէս, ինչ որ միսիոնարաց տարիներով աշխատութեամբը եղած չէր, այս մէկ բէննիոնոց տեսրակին միջոցաւ կատարուեցաւ :

ՉԻՒԻՔԱՌՔ

Յամի Տեառն 1867, Միացեալ Նախանգը գնեցին Ռուսիայէ Ալաքա անուն երկիրը որ է հիւսիսային Աւերի-



ՉԻՒԻՔԱՌ ՏԱՆ ՄԸ ՆԵՐՈՆ ԿՈՂՄԸ



ՉԻՒԻՔԱՌ ՄԱՅՐ ՄԸ

ներ և մղկիթներ կառուցուեցան ի Լահոր, ի Տէլէի, յԱկրա և ուրիշ քաղաքաց մէջ, որոց ոմանք կը մնան ցարդ : ձիհանի օրդին Օրանկղէպ էր մեծ կարողութեան և քաջութեան տէր, բայց յամին 1707 անոր մահուանէն ետքը, պետութիւնն սկսաւ իյնալ մինչև ցլախման անցեալ դարուն, երբ Մողղի պետութիւնը կործանեցաւ Սիխերուն ձեռքով : Ռուս ճիթ Սինկ էր Սիխերուն զլխաւորը, և տիրեց 40 տարի, թողով իւր մահուան ժամանակ, 1839 ին, զօրաւոր բանակ լաւ սպառազինեալ մեծ և փոքր զինուք : Անոր մահուանէն ետքը Լահոր եղաւ տեսարան յաճախ արիւնհեղութեան, և Սիխերուն և Անգղիացուց մէջ երկու սաստիկ պատերազմներէ ետքը, քաղաքը և անոր գաւառը անցաւ Անգղիացուց ձեռքը 1849 ին, և ցարդ մնաց այնպէս :

Յաւայի է նայել անկեալ պետութեան կամ քաղաքի մը վրայ որ կորուսած է իւր համբաւը և պերճութիւնը,

իմ բէննիս :” (բէննի = է քսան բաւայի) :

«Ի՞նչ պիտի գնուի այդ չնչին նուէրով” էր յաջորդ հարցումը : Որտեւցաւ գնեւ տեսրակ մը, և դրել անոր եղբրքին վրայ նուէրին պատմութիւնը, և յաջողութեանը համար աղօթք մը ընելէ ետքը զրկել զայն կատարել իւր պայտօնը այն հեռաւոր երկրին մէջ : Մտտուկը հասաւ յԱւերիկէ, առաքելութեան հողին վրայ, և շատ մը պատուական ու հետաքրքրական ընծաներուն մէջ Ուիլիի աննչան նուէրը մէկ կողմ դրուեցաւ, և ժամանակ մը մտուցուեցաւ իսկ :

Որ մը բնիկ ուսուցիչ մը միսիոնարական կայանէն ճամբայ կ'ընէր երթալու լերան միւս կողմը շինուած դպրոց մը, ուր պիտի աշխատէր : Նա քաջ գիտէր լեզուն և մեծ օգնական մ'էր միսիոնարաց, բայց նա չունէր այն գիտութիւնը որ վերէն երկինքէն կու գոյ : Նա չէր Գրիտոսնեայ, և հաւկառակած էր գինք դարձի բերելու համար եղած բոլոր ջանից :

Երբ թուղթերը կը խառնէին, Ուիլիի տեսրակը երևան ելաւ, որոյ եղբրքին վրայ կար բացատրութիւն մը,

կայի հիւսիսային արևմտեան անկիւնը, հասուցանելով անոր փոխարէն իբր 1,600,000 լիրա : Ալաքա է ընդարձակ երկիր և է աւելի մեծ քան բովանդակ Գաղիա, Սպանիա և իտալիա միանգամայն, բայց կլինան այնպէս ցուրտ է որ բնակիչք են թուով միայն իբր 30,000, որոց մեծագոյն մասն են Հնդիկք : Տեղոյն Հնդիկ ցեղերէն մին կը կուտի Չիլիքաթ, որ կը բնակին 7 գիւղերու մէջ և կը հաշուին լինել 1,000 հոգի : Աւերիկայի երկրական եկեղեցին ունի անոնց մէջ հաստատած առաքելութիւն մը, և կը յուսայ անոնց միջոցաւ հասնել ներսերը գտնուող ցեղերուն, վտան զի Չիլիքաթ են վաճառական որ կը տանին նաւերով բերուած ապրանքները միւս ցեղերուն, և եա կը բերեն մուշակներ ծովեզրը գտնուող վաճառականաց :

Հոս դրուած երկու պատկերաց մին կը ցուցնէ Չիլիքաթի տան մը ներքին կողմը : Կրակարանը կամ վառարանը կը գտնուի տան կեդրոնը, ուր կը վա-

ուին երկու խոշոր կոճեր, և ծուխը դուրս կ'երթէ տան երդիքին վրայ բացուած ծակէ մը, ինչպէս կը անտնուի թուրքիոյ շատ գիւղորէից տուներուն մէջ: Սենեկին մէկ ծայրը վարագուրով բաժնուած է իրրև ննջարան:

Միւս պատկերը կը ցուցնէ Չիլիքաթ մայր մը որ փաթթած է իւր մանուկը խանձարրով, և հաստատած է զայն պատին կռթնած տախտակի մը վրայ: Չարմանալի է որ մանկան ձեռուքները և սուռները պինդ կապելու ա նոգուտ սովորութիւնը մտած է այսչափ ցեղերու մէջ: Թուրքիոյ քանի մը կողմանց ֆրիստոնեայք իմաստնաբար թողած են այդ սովորութիւնը և թոյլ կու տան որ իրենց մանկունք աղատ շարժեն իրենց ձեռուքները և սուռները:

Թէպէտ Չիլիքաթք այսչափ սակաւաթիւ ժողովուրդ են, կը բաժնուին սակայն չորս շոկերու (գատդ) որ կը կոչուին Մըջեր, Ագուաներ, Գայլեր և Կէտեր. և այս շոկերը երբեմն կ'ընեն արինանհեղ կռիւ իրարու հետ: Բայց այս մասնաւոր բանը կայ որ մինչ ի Հնդկաստան մարդ չկրնար ամուսնանալ իւր շոկէն տարբեր շոկէ եղողի հետ, Չիլիքաթ մը ընդհակառակին չկրնար ամուսնանալ իւր շոկէն եղողի հետ:

ԱՆԼՈՒԱՅ ԻՇՍԱՆ ՄԸ

Ռուսիոյ թագաժառանգ իշխանը, արդէ կայրը, միշտ էր շատ զգայուն բնաւորութեան աէր իւր առտնին կարգադրութեանց մէջ, անոր կինն ևս էր անոր նման: Անդամ մը արքայորդուոյ դաստիարակը եկաւ անոր և ըստ,

«Ձեր բարձրութեան գանդատ ունիմ փոքրիկ իշխանին դէմ. նա չուզեր որ լուամ առաւօտներն իւր երեսը:»

«Իրա՞ւ,» պատասխան տուաւ գահաժառանգը, «մենք ատոր դարմանը գտնելու ենք: Ասկէ ետքը թող տուր որ անլուայ մնայ անոր երեսը:»

Արդ՝ պահակներուն սովորութիւնն էր զինուոց շարժումներով ողջունել արքունի ընտանեաց անդամոց իւրաքանչիւրը, աղաքը և բոլոր միւսները երբ և անցնէին: Յաջորդ օրը չորս տարեկան փոքրիկ իշխանը պարտելու ելաւ իւր դաստիարակին հետ: Երբ կ'անցնէին պահականոցի մը քովէ, ուր խոժոռադէմ զինուոր մը կը կենար, սա կանգնեցաւ անշարժ առանց զինուոց շարժումներ ընելու:

Փոքրիկ իշխանը որ սովոր էր ամենուտեք յարգանաց, կ'երևէր թէ դժգոհ եղաւ ասկէ, բայց բան մը չբաս: Քիչ ետքը ուրիշ պահականոցի մը քովէ ևս անցան: Անկէ ևս չցուցուցաւ յարգանաց նշան: Փոքրիկ իշխանը բարկութեամբ խօսեցաւ անոր վրայ իւր դաստիարակին, և անցան յառաջ: Եւ երբ աւարտեցին պատյոքը և հանդիպեցան շատ զինուորաց, որոց և ոչ մին ողջունի նշան ըրաւ փոքրիկ իշխանին, սա վազեց դէպ իւր հայրը աղաղակելով,

«Հայր, հայր, դու պէտք է որ ծեծես բոլոր քու զինուորներդ, անոնք չեն ընեք ողջունի նշան երբ կ'անցնիմ:»

«Ո՛հ, որդեակ,» ըստ հայրը, «անոնք իրաւունք ունին, վասն զի լուացուած զինուորք բնաւ չեն ողջուներ փոքրիկ աղտեղի իշխան մը:» Անկէ ետքը տղան կը լուացուէր ամէն առաւօտ:

ՓՈՔՐԻԿ ՇԵՏՏՐԻՔԱՅ ԱՆՁՆՈՒՐԱՅՈՒԹԻՒՆԸ

Օրագրի մը մէջ պատմուած է հետևեալ դէպքը Միացեալ Նահանգաց նոր վախճանեալ փոխ-նախագահին Մր. Հէնտրիքսոյ մանկութեան վրայ.

Ագբաս այրուոյ մը աղայ կ'երթար ճեմարան: Նոյեմբերի ցորա առաւօտ մը եկաւ դպրոց բոկոսն, վասն զի չունէր կօշիկ: Կէս օրէն առաջ ելաւ սասախի բուք: Կէս օրին այս բոկոսն տղան գնաց դպրոցին ճակատի դուռը երբ դպրոցն արձակուեցաւ, բայց դարձաւ ետ նորէն դպրոցէն ներս մտնել վասն զի չէր կրնար ելլել դուրս այնպիսի ձեան փոթորիկ ժամանակ բոկոսն: Պատանին Հէնտրիքս դիտէր թէ ինչպէս աղքատ տղայ էր նա, և անոր ետևէն երթալով դպրոցէն ներս՝ ստիպեց զնա առնուլ և հաղնիլ իւր կօշիկները և երթալ տուն: «Կրնաս զրկել զայն ինձ,» ըստ, «քրոջս նանիի հետ, զոր պիտի զրկեմ քու հետդ տուն:» Տղան ընդունեց իրեն ցուցուած այս մարդասիրութիւնը, և Հէնտրիքս նստաւ դպրոցին մէջ դուլպաներով մինչև որ քոյրը ետ բերաւ անոր կօշիկները:

ՃՈՆ ԱՏԱՄՍ ԵՒ ԱՆՈՐ ԼԱՏԻՆԵՐԵՆԸ

Ճոն Ատամս, Միացեալ Նահանգաց նախագահաց երկրորդը, ժամանակ ժամանակ սովոր էր ընել հետևեալ

պատմութիւնը. «Երբ տղայ էի կը կարգայի լատիներէն քերականութիւն, բայց այդ հրապուրել չէր ինձ և կ'ատէի զայն: Հայրս շատ կը փափաքէր զրկել զիս քոյէն, վասն որոյ կը կարգայի քերականութիւնը բայց այնպէս զգուելի եղաւ որ այլ ևս կարող չէի շարունակել. և օր մը երթալով հօրս ըսի անոր թէ ես չեմ սիրեր ուսանել, և ինդրեցի որ զիս ուրիշ գործի մէջ դնէ: Հակառակ էր այս նորա բաղձանաց, բայց շուտ մը սա պատասխանը տուաւ. «Շատ աղէկ, ճոն, եթէ չես ուզեր սովորիլ լատիներէն քերականութիւն, խրամ փորէ, թերևս այդ հաճելի ըլլայ քեզ: Մեր հեռաւոր պարտէզը խրամի պէտք ունի, և եթէ կ'ուզես թող լատիներէնի ուսումը և դնա փորէ խրամ անոր շուրջ:» Այս երեցաւ ինձ հաճոյական փոփոխութիւն, և ես գայի պարտէզ: Բայց շուտով տեսայ որ խրամ փորելն աւելի դժուար էր քան լատիներէնը, և այն առաջին կէս օրը բոլոր կենացս երկայնագոյն կէս օրը թուեցաւ ինձ: Այն օրն կերայ աշխատութեան հայրը, և շատ ուրախացայ երբ եղաւ զիչեր: Այն դիչեր բաղդատութիւններ ըրի լատիներէնի և խրամ փորելուն մէջտեղ, բայց ոչ ումեք բան ըսի անոր վրայ: Յաջորդ օրը կէս օրէն առաջ փորեցի և ուզեցի ձեռք առնուլ կէս օրուան ճաշի ատեն լատիներէնս. բայց այս պիտի ըլլար զիջում, վասն որոյ չէի կրնար ընել: Երբ եղաւ զիչեր, յողնութիւնը յաղթեց հպարտութեանը, և թէպէտ կարի խիստ փորձութիւն էր ինձ համար որ երբէք կրած էի կենացս մէջ, ըսի հօրս որ եթէ կ'ուզէր որ ես դարձեալ երթայի ուսանել լատիներէն քերականութիւն, պատրաստ էի: Ուրախ եղաւ հայրս լսելով այս խօսքն ինէ, և եթէ ես յայնմհետէ ստացայ նշանաւոր դիւք մը, անոր պատճառն էր այն երկու աւուր աշխատութիւնս խրամ փորելու:»

Ամերիկայի Միտինգամ քննութեան կողմէն, Խմբագիր Չ. Գ. Կրիս  
Փոխ-խմբագիր Է. Մ. Պարկը  
Ֆինանսներու եղբայրներու խան.  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴՈՂԻՏ  
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈՒ ՊՅՍԱՆԱՆ